

նամարկուին «տեսչութեամբ եւ պիտոյից նոցա պատրաստութեամբ» (անդ, 26):

Ռուբինեան թագաւորութեան բառնալէն վերջ ընդհանուր աղքատութիւնը կը տիրէ Հայաստանի մէջ, որոյ երեսէն կը կրեն մենաստաններն ալ, զորս օտար հարստահարիչները բռնորովին կը մերկացնեն. եւ հին ժուժկալութիւնը՝ գուցէ ակամայ՝ հոն կը վերադառնայ: Այսպիսի եւ կամ թերեւ ի բնէ պարկեշտ մնացած կրօնաստանէ մը կ'երեւի ճառից Լուծմանց հեղինակը, որ կը պարզէ մեզ իւր վանուց չորակերութեան վիճակը. եւ թէ ի՛նչպէս հոն իսկ կային հասարակաց կանոնէն խուսափողներ կամ փափկասէրներ՝ որ իրենց համար խտրութիւններ կը ստեղծէին, ըսելով. «Աղիքս եւ խոչակս չորել է, չըկարեմ խոշոր կերակուր ուտել. մեղք պիտի, նուշ, շաքար»: Արդարեւ մեկնիչս հիւանդաց կերակուր կը համարի «նուշ, շաքար, ձէթ, եղմայրապայք եւ այլ այսպիսիք» (Լծ. Հրց. Ժե):

10. - Աշարտ: — Ընթրիքը կը վերջանար գոհութեան կանոնով զոր տեսանք (աստ, 278-9): Եւ զգաստ վանականք լրջմտութեամբ, ու գինւոյն մտերիմները տատանելով, կ'երթային դուրս շաղակրատելու կամ առանձնանալու իրենց խցերը.